

ուսումը բարձր ուսումնարաններում, բաց ի վա՛քբերից՝ ուր գնում են ուսանելու աստուածաբանութիւն և պատմութիւն, շայերը ազտական արհեստների ճաշակ չունին: Վիզիքական, մտածողական և ազատական արհեստների կողմից քանդակ ժողովուրդ են: Աոցա ճարտարապետութիւնը կոպիտ է: Աոցա եկեղեցիները թէպէտ մեծ և ամրաշէն են, սակայն ոչինչ գեղեցկութիւն չունին և միանգամայն յոյն—բիւզանդական հին և նոր շինութեանց գեղեցկութիւններին հակադիր յատկութիւն ունին: Մի բանում միայն շայերը Յոյներից բարձր են—իւրեանց աների շինութեամբ: Յոյներ աշխատելով Ֆրանսիական կամ իտալական ճարտարապետութեանը նմանեցնել՝ միանգամայն փչացնում են իւրեանց աները. իսկ հարուստ շայր իւր տունը շինում և զարդարում է միանգամայն տաճկական ճաշակով, որ համապատասխանում է կլիմային և շրջապատող բնութեանը:

Փոքր Ասիոյ շայերը Աոստանդնուպօլսի շայերի հետ թուով 3 միլիօն են:

Ե. Գլաղաղէան



ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՐԿՍԵՌ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ:

«Սիէէն իւրաքանչեւ երկու Տեւոն: Առ—է. 4—7:

Ե.

Մեր շայկազուն մանուկների դատարակութիւնը թէև լեզուները բացուած օրից սկսելու է, (ինչպէս որ Աւերուպացւոց կրթեալ մայրերից կրթվում են այնպիսի

թոթովախօս մանուկներ) բայց գոնեւ չորս կամ հինգ տարեկան հասակիցն էլ սկսուի դարձեալ բաւական օգուտ կը բերէ նոցա մտաւոր զարգացման. մինչև որ մեր Ազգն էլ Աւերուպացւոց նման պատրաստէ ուսեալ և կրթեալ մայրեր, բարեկարգ ուսումնարանաց շնորհիւ:

Ի.

Մի դեռահասակ մանուկ երբոր նոր մըտնէ ուսումնարանի նախակրթարան, հարկաւ ուսուցիչը պէտքէ վարուի նորա հետ ինչպէս ընտանի բարեկամ, զուարթ դէմքով. մինչև որ ընտելանայ նորա բնաւորութեան հետը. այն բաների վրայ խօսի՛ որոց անունները արդէն գիտէ նա. և սկսի միևնոյն բանի վրայօք հարցու փորձանել, և ամէն պարագաներով հասկացնել. ի՞նչպէս. «գրասեղանը ի՞նչով են շինում. ո՞վ է շինում. փայտը ո՞րտեղից են բերում», և ըն. նմանապէս և ուրիշ առարկաների վրայօք կարող է մի քանի օր նորա հետը խօսիլ քաղցրութեամբ, և այնուհետև կարևոր է կրթել նորան կրօնական, և բարոյական սկզբունքներով, և զարդարել նորա միտքը օգտակար գաղափարներով:

Գ.

Արօնի վերաբերեալ ուսմունքը՝ այբբենարանի հետն սկսելու է (1). նախ սովբեցնել նորան ուղեղ կերպով դէմքը խաչակնքել, և տալ քանիցս անգամ կրկնել. «Յանունն էօր, և որդւոյ, և հողւոյն սըր-

(1) Թէև այսպիսի նախակրթութեան պարտաւորութիւնը կը վերաբերի ուսեալ մայրերին, որ սովբեցնեն իրանց խնամքով սնուած մանուկներին. ուրեմն սպասելու է ժամանակին. գուցէ մեր ազգն էլ ունենայ նոյն բաղաւորութիւնը:

բոյ, ամէն, , և յետոյ սովբեցնել տէրու-
նական աղօթքը, այսինքն՝ « Հայր մեր որ
յերկինս ես, , նմանապէս «Մնկանիմք ա-
ռաջի քո, , և ուրիշ համառօտ աղօթքներ.
և բառերի միտքը մի առ մի բացատրել նո-
րակիրթ աշակերտին՝ որ հասկանալով սո-
վորի. ոչ թէ թուժակի նման, և տպաւո-
րել նորա սրտի մէջը Աստուծոյ երկիւղը,
նորա ամենակարող զօրութիւնը, և մարդ-
կային ազգի վրայ ունեցած անսահման սէ-
րը, և հայրական խնամքը, և մեր ամենիս
առ նորին Ամենակարող զօրութիւն ունե-
ցած պարտաւորութիւնները և ըն:

Գ.

Բարոյականութեան օգտակարութիւնը
տպաւորել աշակերտի մտքի մէջը զգալի
օրինակներով, և բարոյականութեան վրայ
զրուած զանազան գրքերից առնուած բա-
րոյական առակներով, և պատշաճաւոր
պատմութիւններով, և հետեւաբար զը-
զուեցի՝ ել նորան և զգուշացնել զանազան
մոլութիւններից, և ախորժելի երեցնել որ
և իցէ առաքինութեան արդիւնքները, և
այս միջոցներովս մշակել և արմատացնել
նորա սրտի խորքերումը Աստուծապաշ-
տութեան կրօնի և բարոյականութեան
բարի և ազնիւ սերմունքներ. որպէս զի մի
ժամանակից յետոյ՝ իւր Ազգին և Հայ-
րենեաց բարեպտօւղ տուող բարի ծառ-
գառնայ. այսինքն՝ կրօնասէր, բարեվարք,
առաքինի, կրթեալ, և ազգօգուտ անդամ:

Ե.

Նորավարժ մի աշակերտ անտարակոյս
կը ցանկայ օրէցօր գրավարժութեան, և
զանազան ուսմանց մէջը զարգանալ. ապա
նորան հարկաւոր է (այբբնարանից յե-
տոյ) Հայերէն լեզուի հասարակ ընթեր-

ցանութեան համար մի ձեռնարկ, կամ
դասագիրք. ուրեմն այժմեան զանուած
ընթերցանութեան դասագրքերիցն աւելի
օգտակար է անտարակոյս, մի նոր դասա-
գիրք. գրուած խիստ համառօտ, աշխար-
հաբառ պարզ և դիւրահասկանալի ոճով,
որոյ բովանդակութիւնն լինի հին և նոր Աը-
տակարանի, և Հայոց պատմութիւններ, և
քանի ինչ կրօնի և բարոյականութեան վե-
րաբերեալ խօսքեր. որոյ վրայ հիմնաւո-
րապէս կարող է դաստիարակել մի նորա-
վարժ աշակերտ. զի մեր արժանայիշա-
տակ նախնիքը սովորաբար աշակերտի սրբ-
տումը կրօնի զգացմունքը արթուն և վառ
պահելու համար, կրօնի վերաբերեալ
գրքերի վրայ աւանդած են դաս խօսիլ.
(զուցէ և ս. թարգմանչաց ժամանակից
մնացած այս օգտակար աւանդութիւ-
նը):

Զ.

Ասանդի հին կտակարանի դասերումը
կը կարգայ և կ'իմանայ աշխարհիս և բո-
լոր արարածոցս Աստուծոյ հրամանաւը
ստեղծագործուիլը, մեր նախկին ծնօղաց
պատուիրանազանցութիւնը, և պատ-
ժուիլը. նոցա անդրանիկ որդւոյ անօրէնու-
թիւնը, և կրտսեր որդւոյ անմեղութեամբ
սպանուիլը. աշխարհակործան ջրհեղեղը.
Նոյ նահապետի, և իւր ընտանեաց ազա-
տուիլը. Աբրահամի, և սորա սերնդոց
գործքերը. Մովսէսի և Իսրայէլացւոց
անցքերը, նոցա թաղաւորութիւնը, և
վերջապէս գերութիւնը, թաղաւորու-
թեան կործանումը. «գերութենից ազա-
տուիլը, և ըն. որոնցից կարող է մի կրթեալ
աշակերտ քաղել բարոյական մտքեր՝ և
շահուիլ հոգևորապէս:

Լ.

Իսկ նոր կտակարանի դասերումը՝ կը կարդայ և կ'իմանայ մեր Հիսուս Փրկչի հրաշալի ծնունդը, մկրտութիւնը, աշակերտաց ընտրութիւնը, նորա Մտուածաշին զօրութեամբ գործած զանազան հրաշքները, և հոգեշահ առակներով քարոզած վարդապետութիւնները, մարդկային ազգի համար նորա կրած անտանելի չարչարանքը, և խաչի վրայ մեռնելը, թաղուելը, և երեքօրեայ հրաշափառ յարութիւնը, և Մտուածապէս համբարձումը, նորա վերջին դայուստը, և ընդհանրական դատաստանը, արդարոց յաւիտենական երջանկութիւնը, և մեղաւորաց յաւիտենական տանջանքը: Ապա հետեւաբար կարող է մի աշակերտ ձանաչել իւր քրիստոնէական պարտաւորութիւնները. և համարուել իւր հայրենի եկեղեցւոյն աւանդապահ, հաւատարիմ և հարազատ զաւակորոյ ս. արգանդիցը արգէն վերստին ծընունդ առած է:

Լ.

Ինչպէս կարևոր է հասակով զարգացած մի Հայկազուն աշակերտի՝ տեղեկութիւն ունենալ և իւր ազգի պատմութեան, իմանալ Հայոց գլխաւոր նահապետի, և նորա սերնդոց քաջազնական գործքերը. Հայոց թագաւորութեան անցքերը. քանիցս անգամ կործանուել, և դարձեալ կանգնիլը, և յետոյ բոլորովին վերջանալը, Հայոց մէջ երբեմն եղած արժանայիշատակ անձանց ազգօգուտ գործքերը, և ազգակործան մարդկանց քստմենելի, և պարսաւելի չարութիւնները, և Հայաստանի մէջը պատահած երեւելի դէպքեր, և թշուառութիւններ, և ըն. այս ամէն պատմու-

թիւնները որ մի աշակերտի սրտի մէջը տպաւորուի՝ տարակոյս չըկայ որ ազգասիրական ոգւով վառուած՝ թէ բարի և թէ վատ մարդկանց գործքերիցը հետեւութիւն հանելով՝ իւր Մզգին և Հայրենեաց օգուտ բերելու ազնիւ զգացմունքն ունենայ:

Լ.

Վերջապէս Հայկազուն մանուկներ եթէ հմուտ և բարեվարք ուսուցիչներից մի այնպիսի օգտակար առարկաներ պարունակող դասագրքի վրայ հիմնաւոր կերպով դաստիարակուին՝ կարող են սովորիլ ազատօրէն և ուրիշ օգտակար առարկաներ, կամ ուսմունքներ, և օտար լեզուներ. (եթէ նոցա ծնօղքը չը խնայեն ուսմանց վերաբերեալ որ և իցէ նիւթական պակասութիւնները հոգալու իրանց ուսումնական քաւակաց համար. այսինքն դասագիրք, թուղթ, գրիչ, կաղամար, մատիտ, և ըն.) կարող են կարգալ որ և իցէ ազգերի օգտակար և անպտոր գրքեր, կամ թարգմանութիւններ մանաւանդ թէ լրագրեր. որոնցից քաղեն իրանց համար մտաւոր օգուտներ. էլ ուր որ գնան, և ինչ ուսումնարան որ մտնեն՝ փնաս չի կարող բերել նոցա հիմնաւոր դաստիարակութեան. զի արդէն արմատացած են նոցա սրտերումը Մտուծոյ երկիւղը, կրօնի, բարոյականութեան, և ազգութեան բարի սերմունքը, որոնք ամէն ուսմունքից աւելի օգտակար են թէ հոգւոյ, և թէ մարմնոյ. թէ աշխարհումս, և թէ ի հանդերձելումս. վասնորոյ իրաւամբ խօսած է բազմիմաստ Սողոմոնը, իւր առակաց գրքի մէջը: «Մսկիղքն իմաստութեան երկիւղ Տեառն, հանձար բարի ամենեցուն՝ որք առնեն զնա,»: Վ. Ահ-ըն. Մեծորոյ Գրք. Փառապէտան: